

ները, զոր նա գտած է Ձեզմէ. եւ այն ամէնը զոր դուք ըրած էք եւ կ'ընէք մեր լատին կրօնաւորներուն որոնք այդ կողմերը կը դանուին, եւ ի մասնաւորի Բոկոտն Կարմեղեաններուն :

Յիշեալ Հօր այդ կողմերը դարձին առթիւ կը յայտնէ (Նորին Սրբութիւնը) իւր շնորհակալութիւնը Ձեզ եւ կը խնդրէ միանգամայն որ շարունակէք նոյնը հանդէպ անոնց, որպէս զի Ձեր հօր պաշտպանութեան տակ կարենան ապրիլ խաղաղութեամբ այդ պետութեան մէջ եւ կատարել իրենց ծառայութիւնն Աստուծոյ եւ Ս. Եկեղեցւոյ, որուն համար զրկուած են այդ կողմերը :

Բաց աստի Նորին Սրբութիւնը ձեռնադրած է յիշեալ Հ. Յովհաննէսը Եպիսկոպոս. եւ որովհետեւ յառաջացեալ տարիքի մէջ կը գտնուի, այս պատճառաւ ալ տուաւ անոր ուրիշ Եպիսկոպոս մը յառընթերակայութիւն : Ս. Ժողովը կը խնդրէ Ձեր Տէրութեանէն որ ընդունիք զանոնք որպէս յանձնարարեալք եւ անոնց բոլոր պէտքերու եւ կարօտութեան մէջ օգնէք եւ պաշտպանէք զանոնք ըստ Ձեր կարողութեան : Ձեր այս սիրալիր վերաբերմունքը հանդէպ անոնց մեծապէս հաճելի պիտի ըլլայ Նորին Սրբութեան :

Նկատմամբ այն խնդրոց, զորոնք յիշեալ Հ. Յովհաննէս հայ վաճառականներու կողմէն զբաւ մեր առջեւ, նոյն Հայրը անձամբ պիտի հաղորդէ Ձեզ կարեւորները :

Կը մնայ այժմ, որ Դուք եւ Ջուզայի հայ վաճառականները այս քաղաքի (Հոսմի) մէջ